

Եւս կանգ եմ առնում այստեղ, որպէս զի դուքս դամ «շուայութեան», անչափաւորութեան և դժգոհութեան այս ճահճից, ուր հեշտասիրութեան մէջ իբրեւ ցեխի մէջ թաւալում են, ուր լսելի են գաղանական աղաղակներ, ուր կրքերն իրանց որջ են գտել, ուր չէ կարելի մտնել առանց խեղդուելու, ուր չէ կարելի ոտք դնել, որ չսահուիս, ուր անհնարին է լողալ առանց աղտոտուելու և որոյ (ճահճի) վերայ միշտ լսելի է տատրակների տխուր մնչիւնն» ինչպէս ասում է Ս. Ամբրոսիոս Մեղիոլանացին: Յաղթական երգերը մերձենում են, նոքա կխեղդեն հառաչանքները: Թակարդը — ցանցը կխորտակուի և այն տանջուող հոգիք կազատուեն:

ከቦታው ሲገኝ ማረጋገጥ ይቻላል።

ՈՒՍՈՒՄՆԵԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵ՛

9.

ԽՈՐԵՆԸՑՈՒ ԶՈՐԸՈՐԴ ԳԻՐԳԸ

Մեր այժմեան ունեցած Խորենացու Պատմութիւնը բաղկացած է երեք գրքից: Աթէ որ Թովմա Արծրունին, Խորենացուց չորս - հինգ դար յետոյ, գրապէս չվկայէր Խորենացու չորրորդ գրքի գոյութեան մասին, ոչոքի մտքից չէր անցնիլ այդպիսի մի գիրք ենթագրել, Բայց ինչպէս յայտնի է, Թովմա Արծրունին իւր Պատմութեան մէջ (Ս. Պատերազմ, 1887, եր. 76) աշխարայ վկայում է Խորենացու չորրորդ գրքի կամ զըրուագի մասին, որից ինքը և քաղուածքներ է արել, Ուստի և պէտք եղաւ որոնել այդ չորրորդ գիրքը, Խորենացու Պատմութեան արժէքը հասկացողը միայն կարող է գնահատել այդ կորուստի չափը, որ ունեցել է մեր գրականութիւնը այդ չորրորդ գրքի անհետանալովը, Ուստի և ահաներև է, թէ ո՛րչափ ցաւ պէտք է պատճառէր այդ կորուստը, և թէ քանի՜ բանասէրներ պիտի ճգնէին, և թէ հնար է, վերագարձնել, գտնել,

1) Տեղ Առաքաւտ ամսագիր, Հոկտեմբեր, եւ դեկտեմբեր, 1890:

եթէ ոչ այդ կորած չորրորդ գիրքը՝ գոնէ նրա հետքերը :

Հանգուցեալ Էմինը 2 առաջնորդուելով անշուշտ ոչ այնչափ տրամաբանօրէն, որչափ այդ կորած գրքի հետքերը գտնելու բուռն ցանկութեամբ, Խորենացու «ի Պարսից առասպելաց» երկու գլուխները և Գ գրքի 62 գլուխը համարում էր չորրորդ անհետացած գրքի մասերից 3 :

Հայր Ալիշան մինչև անգամ համարեց գտած լինել այդ չորրորդ գրքից մի հատուած Տրդատ Թադաւորի սպանութեան և Թադման վերաբերեալ 4 : Ուրիշ շատ գիտնականներ և բանասէրներ բաղմամբիւ վարկած-

1) Սրանից ուղիղ քառասուն տարի առաջ ահա թէ ինչ փափագանք էր խօսում Հ. Ալիշանը այդ կորած Գ գրքի համար. «Ոչ ինչ պատուականագոյն ի թանգարանս դպրութեան մերոց հայրենեաց քան զՊատմութիւն Հայոց Մովսիսի Խորենացւոյ, եւ ոչ կորուստ բազմադէտ կամ դիւտ բազմատենչալի քան զԳ նորա տնուանեալ գրոց, կարծիս անգամ հանգիպման գիւտի նորին, յարգահատել անդիւրում՝ աճեցուցանէ եւ զանձնակ զրկանացս, իրջանիկ եւ բարենշան գրէի զօրն՝ յորում յայտնէին երկինք զծածկեալն ի հազարամիայ հնութիւնէ, եւ ոչ իսպառ ի դառն եւ յամուլ ժամանակի համարէի զիս ձգել կեանս, նա եւ պարծանս արդեօք զկեալն իմ առ այնպիսեալ ցանկալի դիւտիւ, Այլ թէպէտ իցեն եւ թէպէտ ոչ ճակատագրեալ ինձ վայելքն այն, միթարեցայց գոնեոյ իմով առ այլս յուսադրութեամբ, եւլն եւայլն» (Բաղմամբէս, 1851, եր. 69) :

2) Խորենացու Պատմութեան Բ գիրք, 2 գլխում ասուած է. «Թագաւորէ ի վերոյ Պարթեւաց Արշակ քաջ ի քաղաքին, որ կոչի Բազդ Առաւատին, յերկրին Քուշանաց», Հանգուցեալ Էմինը իւր՝ Խորենացու ռուսերէն թարգմանութեան մէջ այն կարծիքն էր յայտնել, որ պէտք է Առաւատին բառը կարգաւ Առաւատին = Առաւօտին, հիմնուելով այն բանի վրայ, որ Գ՝ Հերքըլոյի մեկնութեամբ Բակդրայ (Բազլ քաղաքի յունական անունը) եւ Բակդրիա ծագում են պարսկական Բա հ տ ր բառից, որ նշանակում է՝ արեւելք, Էմինի այս կարծիքն յայտնելուց յետոյ գտնուել է Խորեն. Աշխարհացոյցի մի նոր օրինակում ասուած՝ Բազլի Բա մի կ (Աշխարհաբար թարգ. ծանօթ. 186), Հանգուցեալ Պատկանեան Բա մի կ բառը մեկնում է լ ու ս ա ճ ա ճ ա ն չ (Матер. для Арм. словаря, вып. II, եր. 4), Բազդի բերմամբ մեղ յաջողութեց. իմ եւ Պ. Մարի բազդասած ձեռագրում (Ներսէս գրչի օրինակ) գտնել Առաւատին = Առաւօտին ընթերցուածը, նոյն իսկ Խորենացու Պատմութեան ընագրում, Ուրիմն բոլորովին արդարաւում է հանգուցեալ Էմինի այս ենթադրութիւնը եւ ժամանակ է արդէն, որ Խոր. ընագրի նոր հրատարակութեան մէջ Առաւատինը ուղղուի՝ Առաւօտին :

3) Էմինի կարծիքները Խորենացու Գ գրքի մասին (Истор. Арменіи. М.Хор. 17) ընտրովի առնուած են Հ. Ալիշանի վերոյիշեալ յօդուածից. թէեւ առանց աղբւրն յիշելու, Համեմատիւր նմանապէս Էմինի «Յարլէզների» մասին ունեցած կարծիքը Հայկազեան Բառգիրք, Աբալէզ բառի հետ :

4) Այս բոլորի մասին տես Էմինի Խորեն. Ռուս. թարգ. — «Բաղմամբէս», 1851, եր. 75 եւ Աշխարհաբար Խորեն, յառաջաբան, յաւելումած եւ ծանօթ. 540, 779 :

ներ և ենթագրութիւններ են արել այդ չորրորդ գրքի գոյութեան և չգոյութեան և մինչև իսկ նրա բովանդակութեան մասին: Վարինեանց ենթագրում էր, որ Խորենացուն թշնամի՝ տգէտ և մոլի հոգևորականները պէտք է ոչնչացրած լինին այդ գիրքը 1: Վարկածների և ենթագրութեանց մի փոքրիկ մատենագրութիւն կազմուեց այդ չորրորդ գրքի շուրջը և Խորենացիով զբաղուող իւրաքանչիւր բանասէր, հայ թէ օտարազգի, չէր կարող որևէ կարծիք չյայտնել այդ մասին: Նոյն իսկ Նբաէք, որոնք չէին ընդունում այդ չորրորդ գրքի գոյութիւնը, այդպիսիներն անգամ, ասում ենք, չէին կարող վերջնականապէս ազատուիլ այդ կորուսեալ գրքի գոյութեան գաղափարից, և այս շատ իրաւամբ, որովհետև Թ. Արծրունու ակնյայտի վկայութեան դէմ շատ դժուար է ենթագրական փաստերով և տրամաբանական վարկածներով կռուել: Օրինակ, Հ. Խորէն Ստեփանէն, որ չորրորդ գրքի գոյութիւնը հերքողներիցն է, այսուամենայնիւ, վերջիվերջոյ ընդունում է մի այդպիսի գրքի գոյութիւնը: Ահա թէ ինչպէս է դատում Խորենացու այս նորագոյն թարգմանիչը. « Չորրորդ գրքի գոյութիւնը, ինչպէս տեսանք դեռ ևս կարծիքական է, նորա մէջ բովանդակած նիւթերի մասին կարծիքները զանազան են, մանաւանդ որ չկայ և ոչ մի դրական վկայութիւն նորա գոյութեան Գովեսի թէ ժամանակակից և թէ հեռավոր պատմագիրն երի մէջ (Հապա Թովմա Արծրունի²), Ուստի աւելի շրջանկատութեամբ պիտի խօսուի այսպիսի խնդրի վերա: Իսկ լաւագոյն ապացոյց, թէ Գովեսի պատմութիւնը բաղկացած էր մի միայն երեք գրքից, այդ գրքերի վերնագիրներն են. հեղինակը Ա գիրքը կոչում է « Ծընընդաբանութիւն Հայոց մեծաց », Բ գիրքը կոչում է « Բան միջակ պատմութեան նախնեաց մերոց », և Գ գիրքը կոչում է « Աւարտաբանութիւն մերոց հայրենեաց », Այդ Գ գիրքն Աւարտաբանութիւն կոչելուց յետոյ, ինչպէս ենթագրենք Դ գրքի գոյութիւնը, Թովմայ Արծրունու վերոյիշեալ խօսքը բացատրելու համար մեզ հաւանական է թուում. Անգլուայի կարծիքը, թէ գուցէ Մ. Խորենացու աշակերտներից մին կամեցած լինի շարունակել իւր վարդապետի Պատմութիւնը, և գրել է նոյնպէս նորա կեանքի վերա քանի մի տեղեկութիւններ: Եւ որովհետև այս շարունակութիւնը կամ Թովմայի ասած Դ գիրքը, որի մէջ նորա խօսքով պիտի բովանդակուէին Հայաստանում պատահած անցքերի պատմութիւնը մինչև Զենոն կայսեր օրերը, անհամեմատ աւելի ստորին էր առաջին երեք գրքերից, այս պատճառով

1) Տե՛ս «Բաղդատութիւն» Կորինեանցի, յառ. 2-րդան.

նա չկարողացաւ Հայերի նոյնպիսի խնամատարութեան առարկայ դառնալ՝ (Առաջարան, եր. ԽԳ)։

Այսուամենայնիւ, ասել է թէ Հ. Խորենն էլ Լանգլուայի հետ միասին ընդունում են չորրորդ գիրքը, թէեւ գրուած ոչ Խորենացուց, այլ նրա մի աշակերտից։ Այս էլ պէտք չէ մոռանալ, որ այժմեան մեր ունեցած Խորենացու Պատմութեան լրիւ և ամբողջ լինելը, հանդերձ իւր աւարտաբանութեամբ, այլև թերատութեան ոչ մի նշան չունենալը չէ կարող տրամաբանօրէն համարուիլ իբրև հերքումն չորրորդ գրքի գոյութեան, այլ այդ ապացոյց է միայն այն բանին, որ Խորենացին իւր Պատմութեան երեք առաջին գրքերը գրելիս չէ ունեցել մտադրութիւն մի չորրորդն էլ աւելացնելու։ Բայց չէ՞ որ կարող էր, երեք գրքի աւարտումից յետոյ, այդ մտադրութիւնը փոխել, ուստի և ծնունդ կառնէր մի նոր գիրք, որ իբրև շարունակութիւն առաջին երեք գրքերի՝ կլինէր չորրորդ։ Այս մի այնպիսի երևոյթ է, որ ամեն քիչ թէ շատ գրող կարող է իւր վրայ փորձել։

Այս բանին օրինակ ունինք և հին Գպրութիւնից։ Եղիշէն իւր պատմութեան յառաջաբանում թուում է իւր յեղանակները. «Ահա նշանագրեցի յայսմ եւթն յեղանակիս»։ Յետոյ մի առ մի թուելով եօթն եղանակները կամ հատուածները, իրենց բովանդակութեամբ, աւելացնում է. «Յայսմ յեւթն գլուխս կարգադրեալ և եզեալ ծայրալիւր պարապմամբ զսկիզբն և զմիջոցն և զկատարածն, զի հանապազ ընթեռնուցուս»։ Այսպիսի բացորոշ ծրագրից յետոյ ո՞ւմ մտքից կարող էր անցնել, թէ նա գրելու էր և Ութերորդ յեղանակ, Բայց այդ Ութերորդ յեղանակը գրուեց և մեզ հասաւ։ Այսպէս կարող էր գրուել և Խորենացու Դ գիրքը, նոյն իսկ Աւարտաբանութիւնից յետոյ։

Այսպէս կամ այնպէս, առայժմ մեր միտքը չէ ընդունել կամ հերքել Դ գրքի գոյութիւնը։ Միայն չենք կարող չաւելացնել և այն, որ այս հարցով զբաղուող բոլոր բանասէրներն էլ մոռացել են ամենադրական և ծանրակշիռ փաստը, որի զօրութեամբ կարելի էր կասկածանքով վերաբերուիլ Թ. Արծրունու տուած տեղեկութեանը։ Այդ այն է, որ Խորենացուց օգտուող բոլոր պատմաբանները՝ Սերէոս, Յովհաննէս Աթողիկոս, նոյն իսկ ինքը Թովման, որոնք շատ տեղեր գրեթէ բառ առ բառ ընդօրինակել են Խորեն. Պատմութիւնը, չուենին մի այնպիսի նոր բան, որ չգտնուէր մեր այժմեան ունեցած Խորենացու երեք հատորն երում։ Ուրեմն Դ գիրքը չէր պարունակում ոչինչ նոր, ոչ միայն գլխաւոր անցքերի վերաբերութեամբ, այլ նաև նոյն իսկ մանրամասնութիւններ, — կամ այլապէս ասած, չկար Դ գիրք։

Այս բոլորը շատ գեղեցիկ դատողութիւններ են, ընդունակ կասկա-

ծանրի ենթադրելու Թովմա Արծրունու բացարձակ հաստատական յառաջադրութիւնը (assertion)՝ ըստ ոչ բաւարար նրան վերջնականապէս հերքելու համար։ Օթելլոյի թաշկինակի նման Թովմա Արծրունու չորրորդ առ միշտ կմնայ կասկածանքի շարժառիթ։

Եւ մենք ոչինչ չէինք գրիլ այս արդէն ծեծուած և ծամուած խնդրի մասին, եթէ չուեննայինք յայտնելու բոլորովին նոր բան։

Մինչև այժմ այս խնդիրն հետազոտող բոլոր բանասէրները համաձայն են եղել միմեանց հետ կատարելապէս՝ իրենց ուղղութեամբ բոլորեքեանն էլ որ ոն և է են այդ ենթադրական չորրորդ գիրքը՝ ոչ միայն իրապէս, այն է՝ մատենագրաբաններում, և մատենաներում, այլ և իրենց դատողական զինարանում։ Բոլորն էլ առհասարակ մոռացել են քննութեան ենթարկել այդ իրենց բոլոր խուզարկութիւնների բուն սկզբնապատճառը՝ Թովմայի խօսքերը, որ միակ աղբիւրն են այս ամեն վարկածների և խուզարկութեանց։ Թովմայի ասածին վերաբերուել են բոլորովին ոչ Թովմայօրէն, այլ կատարեալ հաւատով։ Մինչդեռ չէ՞ որ Թովմա Արծրունու այդ մի չորրորդ խօսքը կարող է սխալ լինել, կամ աղջատուած։ Եւ պէտք չէ մոռանալ, որ այդ միակ «չորրորդն» է մեր ամբողջ գրականութեան մէջ, Խորենացու չորրորդ գրքի գոյութեանը վկայող։

Ուստի և մենք կամենում ենք այս խնդրում ընթանալ բոլորովին նոր ուղղութեամբ, մի կողմ թողնելով գլխովին վաղաժամ հարցասիրութիւնը, թէ ինչ կարող էր բովանդակել Խորենացու չորրորդ գիրքը, կամ թէ ում ձեռքով կարող էր գրուած լինել, կամ թէ ինչպէս և ինչ պատճառով անհետացած, կամ թէ Խորենացու ո՞ր գլուխներում փնտռել ակնարկութիւններ այդ կորած գրքի վերաբերութեամբ, և կամ մեր գրականութեան ո՞ր հատուկտորներն ու հատուածներն համարել իրրւ այդ կորած գրքի թողած հետքեր։ Այս պատճառով մենք չենք համառօտում այօտեղ, այս խնդրով զբաղուած բանասէրների վարկածները և անցնում ենք ուղղակի Թովմայի հատուածի ուսումնասիրութեանը։

Արեմն և թող ներուի մեզ փոքր ինչ աւելի ընդարձակօրէն յառաջ բերել Արծրունու այդ՝ մեզ հետաքրքրող հատուածը, տեղտեղ յապաւումներով։

«Եւ թագաւորեալ Առամ որդի Յաղկերտի՝ կոչէ ի գուն զսուրբն Սահակ Հայոց՝ Վաթողիկոս։ Որոյ առեալ զթողունս իւր զՀմայեակ և

1) Այն կարծիքը թէ Դ. Գիրքը պահուած է Երուսաղէմի Հայոց վանքում մեզ բոլորովին անհասանազան է թւում. եթէ մի այդպիսի բան գոյութիւն ունենար, շատունց հրատարակուած կլինէր արդէն։

« Համազասպեան գնան առ արքայ ի Տիսպոն: Քանզի Վարդան անցեալ
 « գնացեալ էր սուրբ վարդապետաւն Մաշտոցիւ առ կայսր Թէոփորոս և
 « առ Ատորիկոս արքեպիսկոպոս Հանդերձ թղթովք սրբոյն Սահակայ, տա-
 « նելով ընդ իւրեանց և զգիր և զբառ հայերէն գպրութեան . . .
 (պամուում է Մեսրովպի և Վարդանի գործնէութիւնը Յունական բաժ-
 նում, ըստ Խորենացու (Գ գիրք) և ըստ Վորիւնի):

« Իսկ ի հասանել սրբոյն Սահակայ ի Գուռն արքունի հանդերձ նախա-
 « րարօքն՝ զիջանէ ցածնու Վաւա՛մ ի բարկութենէն . . . (պատմում է Ար-
 տաշրի գահակալելը և գահընկեցութիւնը, նախարարների չարմիարանու-
 թիւնը ընդգէմ թագաւորի, և Սուրմակ արեղայի մղեգնոտ փառամոլու-
 թիւնը և ընդ որ բոլորն էլ յայտնի են մեզ Խորենացու երրորդ գրքից):

« Եւ եղև ի գառնալն Սրբոյն Սահակայ ի Պարսից՝ եկն առ նա դար-
 « ձեալ Աղան Արծրունի, և ընկալաւ ի նմանէ սքեմ կրօնաւորութեան,
 « և երթեալ բնակէ առանձնապէս ի Գողթն գաւառի ի տեղւոջ վարդա-
 « պետութեան սրբոյն Մեսրովպայ» . . .

(Պատմում է նախարարների Սահակ Պարթևի հետ հաշտուիլը և Սա-
 հակ Պարթևի տեսիլը): « Եւ այս ամենայն այսպէս եղեալ, կեցեալ սուրբն
 « Սահակ ամս ՃԻ (Հարիւր քսան) փոխի յաշխարհէս ի կարգս հրեշ-
 « տակաց, և տարեալ հանգուցանեն զնշխարս սրբոյն յԱշտիշատ Տարօնոյ ի
 « տեղւոջ վկայարանի սրբոյն Մկրտչին և Աթանաղինի վկային: Ի նմին ամի
 « յետ վեց ամսոյ անցանելոյ փոխի և սուրբ հայրապետ Մաշտոց, և խա-
 « ջանշան լուսով խաղացուցանեն բազմութեամբ նախարարացն Հայոց ի
 « ձեռն Վահանայ Ամատունոյ, որ էր ի ժամանակին սպարապետ Հայոց,
 « և տարեալ հանգուցանեն զնա ի յՕշական զիւղ, ի գաւառին՝ որ կոչի
 « Ոտն Արագածու: » (տե՛ս նոյնը՝ Խորեն. Գ. 67 և Վորիւն՝ Պատմու-
 « թիւն Մեսրովպայ, Վենետ. 1833, եր. 25—27):

« Յամի երկրորդի Յազկերտի որդւոյ Վաւամայ երկրորդի՝ բարձաւ թագա-
 «ւորութիւնն ի տանէն Հայոց, որ տեւեաց ամս 'նԺԵ և վախճանեցաւ:

« Յետ բառնալոյ թագաւորութեանն ի տանէն Արշակունեաց, և հայ-
 «րապետութեանն ի տանէն սրբոյն Գրիգորի՝ Վեռնդ ոմն աշակերտ սըր-
 «բոյն Մաշտոցի տեղապահ լինէր սրբոյն Սահակայ, և Յովսէփի եպիս-
 կոպոս . . . »

« Իսկ Վարդան Մամիկոնեան, որդի Համազասպայ Մամիկոնէի, թոռն
 « սրբոյն Սահակայ խոյս տուեալ գնաց զկողմամբն Մոկաց:

« Եւ քանզի յետ մահուանն մեծին Սահակայ Բագրատու-
 «նւոյ սպարապետի, ասպետի և զօրավարի Հայոց, հաւատացեալ էր
 « Թէոփոսի կայսեր զսպարապետութիւնն Հայոց Համազասպ Մամիկոնէի և
 « որդւոյ իւրում Վարդանայ . . . »

« Սահմանային Սահման է, որոյ հրահանգներուց մեծ վարդապետն Մովսէս
 « Կիւղեղեանիւնէն Կիւղեղեան Կիւղեղեան Պարսկէան Հայոց մեծաց, հրահանգն յարե-
 « նաւորով ինչեւ յԱրարային ինչ ինչ Զինան. որոյ ժամանակ ինչացն ունեւ
 « ինչեւ մահ ձի (հարեւոր Կիւղեղեան) : Լի և պարտա ծերանքեմով, որոյն ժամանակ
 « Կիւղեղեան մեզ այն ի շարքերու պահուիլն ինչպէս պարսկէան Մովսէսի Խորե-
 « նացոյ վերաբերման ի վերայ ելիցողն ինչ պարսկէան հարսանքին, զոր և
 « Երանելին Կիւղեղեան Կիւղեղեան Մովսէսի և Մովսէսի որոյն Մեղեմիայն, ինչ-
 « Կիւղեղեան Կիւղեղեան պարսկէան զարմանքն մեզ հարսանքն ինչ : » (Թով-
 « մայի Վարդ. Արծրունցի Պատմութիւն Տանն Արծրունեաց, Ս. Պետեր-
 « քուրգ, 1887, Եր. 72—76) :

Այս հատուածի մէջ մեր գլխաւոր ուշադրութիւնը դրաւում է հե-
 տեւալը. « Որպէս գրեալ աւանդեցաւ մեզ այս ի չորրորդ գրուագի խոս-
 « տաբանեալ Պատմութեանն Մովսէսի Խորենացոյ » : Գրուագի բառը
 Խորենացին գործ է ածում ոչ իրրեւ գիրք կամ հատոր, այլ իրրեւ
 գլուխ. օրինակ՝ « Այս գրուագի մեծ, և հաւաստի պատմութեամբ լի. (Խո-
 « րեն. Բ. 7.) : Մինչդեռ Խորենացին իւր իւրաքանչիւր հատորը կոչում է՝
 « գիրք և ոչ թէ գրուագ. « զի ահա որ ինչ առ մերով ժամանակաւ ե-
 « ղեալ կամ գոյն ինչ հեռի, զրուցեցից քեզ անսխալ, և բոլորդ առ-
 « նելով գիրս » (Խորեն. Գ. 1.) : « Գրեմք քեզ այժմ և որ ինչ ա-
 « ռանձին մերոյ աշխարհիս գործք, և բոլորդ առնելով գիրս » (Բ. 1.) :
 « Զի ոչ յառաջ ինչսն մեր ասացեալ գիրս և ոչ ի վերջին բանս ար-
 « ժանաւորեցաք շարեւ » (ի Պարսից Առասպ.) : Գրուագն հասկանա-
 լով իրրեւ գլուխ, որոնք Խորենացու երեք գրքերի չորրորդ գլուխ-
 ները, եւ մեր փնտռածին քիչ թէ շատ համապատասխանող բան գրու-
 ւում ենք միմիայն Առաջին գրքի Գ գլխում, ուր Խորենացին խոստա-
 նում է խօսել մի բանի վրայ. « Արդ օրէն է մեզ աստանօր զկարծիս
 « նոցա յայտնել, թէ զինչ իւրաքանչիւր ոք ի նոցանէ խորհեցան այս-
 « պէս զայսոսիկ գրել. այլ վասն երկարութեան առաջիկայ գործոյս՝ այ-
 « լում տեղւոյ և ժամանակի զայսոսիկ թողեալ, հատու-
 « ցութ աստանօր զբանս սկսանելով յաղագս այսորիկ որպէս և հաւատա-
 « ցեալ եմք » : Բայց ի մօտոյ քննելով այս չորրորդ գլուխը, տեսնում
 ենք, որ սրա բովանդակութիւնը բոլորովին չէ համապատասխանում այն
 նիւթին, որի վրայ խօսում է Թովմա Արծրունին, ուստի և թէ Խորե-
 նացին, ուրիշ տեղում և ուրիշ ժամանակում կատարել է իւր
 այդ խոստումը, այսուամենայնիւ այդ չէ կարող վերաբերիլ այն չորրորդ
 գրուագին, որի վրայ մատնացոյց է լինում Թովմա Արծրունին :

Այս կողմից ոչ մի որոշ հետեւանքի չհասնելով, այժմ ընդունենք,
 ինչպէս այդ ընդունել են մինչև ցարդ այս խնդրով զբաղուող բոլոր բա-

նասէրները, թէ Թով. Արծրունու գրուագիրը նշանակում է գիրք. և որովհետեւ մինչև այժմ ոչ մի տեղում չէ յայտնուել Խորենացու չորրորդ գիրք և ոչ մի ուրիշ տեղում էլ չէ յիշուած այդ մասին, բացի Արծրունու այս հատուածից, և որովհետեւ բոլոր այս խուզարկութիւնների և ենթադրութիւնների պատճառը միակ չորրորդ բառն է, ուրեմն և ի՞նչ կլինի, եթէ այդ չորրորդ բառը սխալ լինի և կամ փոփոխուած, կամ աղաւաղուած:

Ձեռագրերի մէջ ոչ մի բան այնչափ յաճախ չէ և սովորական, ինչպէս թուերի շփոթումները: Չորրորդը եթէ իրրեւ թիւ գրուած լինէր տառով — և այդ կարող էր լինել, ինչպէս որ Արծրունու նոյն հատուածում երկու տեղ հարիւր քսանը գրուած է՝ ՃԻ, — այն ժամանակ չորրորդի փոխանակ կունենանք մի դա՛ — Գ: Իսկ դան ամենից յաճախ շփոթուում է գիմի հետ: Աւստի և սկզբնականը ամենայն դիւրութեամբ կարող էր լինել գիմ և ոչ թէ դա. «Որպէս գրեալ աւանդեցաւ մեզ այս ի Գ (այն է՝ յերրորդ) գրուագի խոստարանեալ պատմութեանն Մովսէսի Խորենացւոյ»:

Անշուշտ այս դեռ ևս մի լոկ ենթադրութիւն է:

Բայց ուշի ուշով քննելով ի՞նչ ենք տեսնում:

— Տեսնում ենք, որ այս ենթադրութեան ամենագրական ապացոյցը գտնուում է իւր կողքին անմիջապէս, որի վրայ և շատ զարմանալի բան, ոչ ոք ուշադրութիւն չէ դարձրել: Ահա այդ ապացոյցը:

— «Աերադարձութեան ի վերայ երկեցունց գրուագեալ հատուածին»: Այսինքն թէ՛ աւանդուեցաւ այս մեզ Մովսիսի Խորենացու պատմութեան երրորդ գրուագում, որ վերադարձութիւն էր երկու գրուագեալ հատուածների վրայ: Ամա՛ աւելի պարզ ասած՝ երրորդ գրուագում, որ գրուեց երկու գրուագից յետոյ: Աւրեմն և Մովսիսի պատմութիւնն ունէր առաջին, երկրորդ և երրորդ գրուագ կամ գիրք, բայց ոչ բնաւ՝ չորրորդ: Երկու գրքից կամ գրուագից յետոյ գրուող գիրքը լինում է երրորդ գիրք և ոչ երբեք չորրորդ: Երկեցունցը ամենագրական ապացոյց է, որ պէտք է սկզբնագրում լինէր անպատճառ գիմ, որ յետոյ շատ սովորական սխալմամբ կարգացուել է՝ դա: Իսկ գիմի և դայի շփոթման օրինակներ, ոչ միայն թուերում, որ շատ հասկանալի բան է և ներելի սխալ այլ և հասարակ և յատուկ անուններում այնչափ յաճախ են, որ չարժէ անգամ օրինակներ բերել: Յիշենք միայն երկու յատուկ անուն Խորենացուց, որոնք աղաւաղուած են գիմի դա կարգացուելովը և որոնք դեռ մինչև այժմ էլ չեն ուղղուած բնագրի հրատարակութեան մէջ. (Տպ. Տփլիս, 1881), Այս

յատուկ անուններն են Մերոֆ փոխանակ՝ Մերոֆ-ի և Փղեֆոնիոս փոխանակ Փղեֆոնիոսի (Խորեն. Ա. 4) և Բ. 13) 1 :

Այսպիսով ուրեմն Թովմա Արծրունին ինքն էլ երբեք չէ տեսել որևէ չորրորդ գիրք և ոչ էլ այդ մասին որևէ դադափար ունեցել։ Անուշագիր գրչի մի փոքրիկ շնչին խաղը դարձել է ահագին շփոթութեանց պատճառ։

Բայց կարող են մեզ հատուցանել մեր դրամով ընդունելով հանդերձ որ երկու թուերից մինը կամ « չորրորդը » և կամ « երկեցունցը » սխալ է, կարող են մեզ առարկել թե այդ սխալը « երկեցունց » բառի մէջն է և ոչ թե « չորրորդի »։ Եւ իսկապէս՝ եթէ այժմեան « երկեցունց » - ի փոխանակ լինէր « երեցունց », այն ժամանակ ոչ միայն մեր հաստատութեան գլխաւոր հիմքը կկործանուէր, այլև « չորրորդ »-ի համար կգտնուէր մինոր և առաւել զօրաւոր փաստ։ Բայց « երեցունց » չկայ։ Թովմա Արծրունու առաջին հրատարակութեան մէջ « երկեցունց » է (Վ. Պոլիս, 1852. եր. 82), « երկեցունց » է նաև երկրորդ տպագրութեան մէջ (Ս. Պ. Բ. 1887, եր. 76), որին խնամով հսկել է Քերովբէ Պատկանեան, բաղդատելով նորից հնագոյն ձեռագիրը (գրուած Աղթամարում, 2ԾԲ թուին) երկու նորագոյն ձեռագրերի հետ և չի ներքևում նշանակելով տարբեր ընթերցումները։ Եղած բոլոր հրատարակութիւնները այս երկու տպագրութիւնն են, ուստի և այս հրատարակութիւններից եղած բոլոր քաղուածքներումն էլ « երկեցունց » է. ինչպէս նաև Բրոսսէի Փրանսերէն թարգմանութեան մէջ, (Ս. Պ. Բ. 1874) 2 : Միւս կողմից՝ այն բոլոր խորհրդածութիւնները և

1) Գիմի եւ դայի շփոթութիւններ այնչափ յաճախ են թուելու, որ ով որ գտնէ մի ձեռագիր ծայրէ ծայր տնադելու քաջութիւնն է ունեցել. անշուշտ հանդիպած կլինի մի քանի այդպիսի վրիպակների։ Գիմի եւ դայի շփոթութիւնից ծագած, արդէն ոչ թուերի, որ հասարակ բան է եւ տնօրեայ երեւոյթ. այլ աղջատուած բառերի օրինակներ ունի հմուտն Նորայր Բիւզանդացին. իւր « Բառագիտութեան » մէջ. թէեւ յարգելի հեղինակի բերած բոլոր դէպքերին մենք համաձայն չենք։ Օրինակ՝ « Գերմակ » բառի եւ արաբական « Գերմակ » - ի մերձեցումը եւ գիմ ու դայի ենթադրական շփոթումից ծագելը մենք չենք կարող ընդունել այն հասարակ եւ պարզ պատճառով, որ Գերմակը ոչ միայն գրոց բառ է, այլ պահանջել է եւ ժողովրդեան բերանում (Այրարատեան բարբառ)։ Իսկ ժողովրդեան բերանում չէր կարող գրչի վրիպակից ծագած սխալը հետեւանք ունենալ։ Աւելորդ է տեսլ եւ այն, որ գերմակը, արաբացիների միւր երկիրն արշաւելուց շատ առաջ, յայտնի էր մեր լեզուին Սուրբ գրքում (Գ. թագ. Գ. 22)։

2 Մայր Աթոռի մատենադարանը դժբաղդաբար թովմայի Պատմութեան ոչ մի ձեռագիր չունի։ Աւրիշ տեղերում եւ ուրիշ միաբանութեանց քով գտնուած ձեռագրերի համար ահա թէ քննէ տեսւմ 2. Զարբանալ. « Թովմայի Արծրունու Պատմութիւնն առաջին անգամ տպագրեցուի Միջագիւղ Պալսոյ յամին 1852. Ազ.

գատողութիւնները, որոնք գրդում էին բանասէրներին և մեզ կասկածել Խորենացու չորրորդ գրքի գոյութեան մասին, այդ բոլոր գատողութիւններն, ասում ենք, այժմ մեր այս քննադատութիւնից յետոյ, ինձ թւում է, թէ ստանում են իրենց բոլոր ուժն ու զօրութիւնը։ Ինչպէս ամեն բան խօսում է յօգուտ երեք գրքի, ուրեմն և «երրորդ» ընթերցուածի և հակառակ «չորրորդ»-ի, այսպէս և ամեն բան վկայում է յօգուտ «երկեցունց» ընթերցուածի և հակառակ «երեցունց»-ի, որ չկայ էլ, չեղած մի ընթերցուածի դէմ գրել հարկադրում է մեզ այն սովորական և յաճախ կրկնուած երեւոյթը, որով առաջնորդուած շատ անգամ սրբագրում են հակասական երեցած հատուածներ, առանց երկար բարակ կշռադատութեան։ Արծրունու «չորրորդն» ու «երկեցունցը» հակասական են և կարող է գտնուել մի նոր ձեռագիր, որի գրիչը, նկատած լինելով այդ հակասութիւնը, սրբագրած լինի դրան, «երկեցունցը» «երեցունց»-ի փոխելով։ Աւրեմն այդ ենթադրական դէպքումն էլ մենք Նախապատուութիւնը պէտք է տանք «երկեցունց» ընթերցուածին։ Եթէ «երկեցունցը» տառով գրուած լինէր նախօրինակում, այդ դէպքումն էլ դժուար է ենթադրել «երեցունց» ընթերցուած, քանի որ բն և գիմ անհամեմատ աւելի անման են միմեանց, քան՝ դա և գիմ։ Բայց եթէ այդպիսի մի սխալ սրբագրութիւն կատարուած լինէր և հասած մեզ բոլոր յայտնի եղած ձեռագրերում, այն ժամանակ ոչ մի հաւանականութիւն չէր լինի, թէ երբ և իցէ քննադատութիւնը կարող պիտի լինէր վերականգնել ուղիղը և գտնել այդ կատարուած և յղկուած սխալը։ Բարեբաղդաբար այդ չէ տեղի ունեցել և «երկեցունցը» չէ ենթարկուել վրիպական «չորրորդի» ազդեցութեանը, թէպէտ և այդ կարող էր լինել։

Այսպիսով մենք գալիս ենք այն համոզմանը, որ երբեք չէ եղել Խորենացու չորրորդ գիրքը, ուրեմն և դրա մասին յիշատակութիւն։

Բայց տեսնենք արդե՞ք այս յարմար է գալիս մեր յառաջ բերած՝ Թովմա Արծրունու ամբողջ հատուածի բովանդակութեանը և մտքին։

Թամարայ մէջ գրուած օրինակէ մը, որ հիմայ ի Ա. Պոլիս է, եւ ուսկից գաղտնի տրած կերեւտն ուրիշ տեղ մեզի ծանօթ օրինակք տւի (Հայկ. Հին Գպրութեան Պատմ. Վիճատ. 1886, եր. 513),

1) Այսպիսի մի սրբագրութիւն նկատուում է Հ. Աւիշանի վերոյիշեալ յօդուածում եւ Հ. Զարեանտլեանի դասագրքի մէջ, ուր «երկեցունցի» փոխանակ դրուած է «երեցունց» (Հայկական Հին Գպրութիւն. Վիճատ. 1886, եր. 356)։ Այս մի գեղեցիկ օրինակ է, թէ ինչպէս մի սխալ կամ վրիպակ, իրերի բնական ընթացքի ուժով, պատճառ է դառնում ուղիղն էլ սխալ սրբագրելու։

Իւր ասելով, ի՞նչ է քաղել Թովմա Արծրունին Մովսիսի այդ երրորդ (կամ՝ չորրորդ) գրքից, — Քաղել է Մովսիսի լի և պարարտ ծերութեան մասին վկայութիւն, աւելացնելով դրան իւր կողմից, որ Մովսէսը ապրեց հարիւր քսան տարի: Իւր կողմից ենք ասում, որովհետեւ Մովսէսն ինքը իւր մասին չէր կարող գրել, թէկուզ չորրորդ կամ հինգերորդ գրքում, թէ ինքը քանի տարի ապրեց: Սակայն անշուշտ, կարող էր գրել իւր ծերութեան մասին: Աւ, յիշուի՛ր, բաց անելով Խորենացու երրորդ գիրքը, գտնում ենք այդ վկայութիւնը. «Զի և ես այրեմ ծերացեալ և հիւանդոտ և անպարապի թարգմանութեանց, և զերագելն միայն խոկացի, ոչ ինչ մաքրագունից պարապեալ բանից, զի և քո (Սահակայ Բագրատունւոյ) կամքդ կատարեսցին, և ես ճողոպրեցայց ի քոց հարկեցուցանող բանից և աղաչանաց, մարդ զքեզ վարկանելով կարեկցութեամբ՝ մեզ հաւասարեալ, և ո՛չ, որպէս քերթողքն ասեն, մերձազաւակք և մտասերք գոլ և նոյնասերմանք աստուածոց իշխանք» (Խորեն. Գ. 65):

Լուսի պէս պարզ է, որ Թովմա Արծրունին այս 65-րդ գլուխն է ունեցել իւր աչքի առաջ, վերեւում բերուած հատուածը գրելիս: Այս գրվածքում կգտնէք նոյնը, ինչ որ Թովմայի մեր մէջ բերած հատուածում, այն է՝ Սահակայ Պարթևի վերագրածը Պարսկաստանից և Վարդան Մամիկոնեանին և Սահակ Բագրատունուն, «որոյ հրամանաւ գրեաց մեծ վարդապետն Մովսէս, տիեզերահռչակեալ քերթողն, զգիրս Պատմութեան Հայոց մեծաց»: Կամ Խորենացու խօսքերով ասած՝ «և ես ճողոպրեցայց ի քոց հարկեցուցանող բանից և աղաչանաց»:

Այսպիսով յօգս է ցնդում չորրորդ գրքի գոյութեան խնդիրը:

Բայց Արծրունու վերոյիշեալ հատուածը, բացի չորրորդ գրքի գրչագրի վրիպակից յառաջացած խնդրից, ունի և այլ հետաքրքրական կէտեր:

Առաջին՝ Խորենացու 120 տարին: Բայց Արծրունին 120 տարի վերագրում է նաև Սահակ Պարթևին: Վերջինիս մասին հաստատապէս գիտենք, որ յիսուն և մի տարի եպիսկոպոսութիւն կամ եպիսկոպոսապետութիւն արաւ. «կեցեալ եպիսկոպոսապետութեամբն ամս յիսուն և մի»: Մեռաւ իւր ծնդեան օրը, ծերութիւնից և հիւանդութիւնից շնորհուեց՝ «իրր զի ոչ պակասութիւն (պակասութեան) իրիք մասն ի ծերութենէն եղանիլ, և ոչ յախտից առնդունել» (Խորեն. Գ. 67): Այս մի և նոյնը վկայում է և Վորիւն (եր. 25): Ակներե է, որ հարիւր քսան տարին, կամ երկարակեցութեան այս լրումը, մի բարեպաշտական տուրք է, վճարուած երկու պատկառելի ծերունիներին, մի աւանդութիւն, ստեղծուած դարեր անցնելուց յետոյ: Իւր ծնած օրը մեռնելն էլ, երկարակեցութեան և անցաւագարութեան նման, նշան են սրբու-

Թեան՝ որ վերագրուում է այս և այն մաքրակրօն անձին. ներսէս մեծն էլ, ներսէս Ե. Աշտարակեցին էլ մեռած են համարուում իրենց ծննդեան օրը:

Իսկ ինչ վերաբերում է Խորենացուն, նա հինգերորդ դարի սկզբին հազիւ թէ ծնուած լինէր. գոնէ նա այնքան փոքր էր, որ այբուբենի գիւտի ժամանակ՝ աշակեքտների թուում՝ չէր: Ուսանողութեան գնաց արտասահման, թարգմանիչների Եփեսոսի ժողովքից դառնալուց յետոյ՝ 432 — 33 թուին, երբ հազիւ թէ 30 տարեկան լինէր: Իննը տարի ուսանողութիւնից յետոյ վերադարձաւ հայրենիք և, ինչպէս կարծուում է, շատ ուշ սկսեց գրել իւր պատմութիւնը: Մեռաւ հաւանականաբար՝ 493 թուին, ուրեմն հազիւ թէ 93 տարեկան հասակում:

Երևի այս բաները աչքի առաջ ունենալով՝ ոմանք այդ՝ Արծրունու ասած 120 տարին վերագրում են ոչ Մովսէսին, այլ Սահակ Բագրատունուն¹: Բայց այս աւելի ևս անհեթեթութիւն է. քանի որ մենք գիտենք Խորենացուց, որ Սահակ Բագրատունին անհամեմատ փոքր էր Մովսէսից. — «Այլ տացուք զայսոսիկ մանկականի քոյոց տիոց և անհասութեան խակութեանդ լեալ տարփանք . . .»: Մովսէսը ինքը քանի՞ տարեկան պիտի լինէր, որ վկայէր իրենից փոքր Սահակ Բագրատունու 120 տարեկան լինելու մասին: Իսկ Թովմա Արծրունին էլ այդ չէր կարող անել երբէք. քանի որ նա՝ Թովման, Սահակ Բագրատունու, հարկաւ սխալմամբ, աւելի շուտ մեռած է համարում, քան թէ Վարդան Մամիկոնեանին (տե՛ս վերևում մէջ բերուած Արծրունու հատուածը):

Գանք երկրորդ կէտին: Թովմա Արծրունին Խորենացու Պատմութիւնը համառօտում է այսպէս. «սկսեալ յԱգամայ մինչ ի կայսր Զենոն»: Այս կէտը շատերին, կամ լաւ ևս, ամենքին կարծել է տուել, որ Խորենացին պէտք է գրած լինէր Հայաստանի պատմութիւնը. Հայոց թագաւորութեան անկումից յետոյ էլ շարունակելով մինչև Զենոն, այն է՝ 433—491 թուականը: Եւ այս էր համարում այն ենթագրեալ չորրորդ գրքի գլխաւոր պարունակութիւնը: Իսկ որովհետև չորրորդ գիրք չկայ, չէր կարող լինել և նրա պարունակութիւնը կամ բովանդակութիւնը: Խորենացու մէջ չկայ

1) Ուրիշների հետ միասին այս կարծիքին է եւ շ. Խ. Ստեփանէն (աշխարհաբար Խորեն, յառաջաբան եր. 1. ծնթ. 1. եւ եր. 1. թ. ծնթ. I), Հայր Խորենի այս աշխատութիւնը գերծ չէ մնացել այսպիսի կոպիտ սխալներից եւ այս աւելի դարմաշալի է. քանի որ սղդ աշխատութեան գործակցել է եւ պ. Ստ. Մալխուհան, Սրբ. Հայրը անում է. օրինակ, այսպիսի սխալներ. — Եզնիկի ծննդավայր կողքը գնում է Տայքում (?) (ծնթ. 734), Մամուկասիա քաղաք ասում է՝ իբրեւ թէ չկայ (ծնթ. 737), ուստի եւ ուղղում է՝ Սամուկաստ, մինչդեռ թէ «Թեոդորոս Մամուկասացին», շատ յատնի է եկեղեցական պատմութեան

Զենոնի անունն, «մինչ ի կայսր Զենոն» էլ չէ նշանակում թէ այդ պիտի լինէր։ Եթէ Խորենացու պատմութիւնը այն կերպարանքն ունի, իբրեւ թէ վերջացած լինէր Վարդանանց պատերազմից առաջ, թէեւ ողբի մէջ կարելի է տեսնել ակնարկութիւններ այդ պատերազմին վերաբերեալ, սակայն ինքնը գրողը Խորենացին, անշուշտ ապրեց մինչև Զենոնի և Պարսից Պերոզի ժամանակը, ուստի և հաւանականէ, որ նրա պատմութեան առաջին օրինակներում յիշուած լինէր իբրեւ թուական, կամ թուականութեան հետ միասին Զենոն կայսեր անունը և այդպիսի մի յիշատակարանից երեւի առաւ Անեցին Մովսէսի (մահուան) թուականը՝ 493, որ մեզ շատ մօտ է երևում ճշմարտութեան, եթէ չէ նոյն իսկ ինքը ճշմարտութիւնը։

Թովմա Արծրունու համար (ինչպէս և Սերէոսի և Յով. կաթողիկոսի համար) Խորենացու պատմութիւնը աղբիւր էր Ադամից մինչև Զենոն կայսրը, և այդ ժամանակամիջոցի համար Թովման չունէր այլ աղբիւր, չհաշուելով Եղիշէի կամ Փարպեցու մասնական պատմութիւնները 2։

Երրորդ կէտ։ Թովման յիշում է Վորիւնին իբրեւ վկայ հաւատարմութեան Մովսէսի պատմութեան, որովհետեւ Սահակի (Պարթևի) և Մաշտոցի մասին պատմութեանը կան և Վորիւնի մէջ, որ անշուշտ, թէ Մովսիսից և թէ Վարդանանց Պատերազմից առաջ էր գրել 5։ Վորիւնի մէջ փնտռել Մովսէսի 120 տարեկան կամ ծեր լինելու մասին վկայութիւն non—sens է, քանի որ այդպիսի բան, ըստ էութեան, չէր կարող լինել։ Թովմայի խօսքերը, թէ՛ «զոր և երանելին Վորիւն, ուսումնակից Մովսէսի և աշակերտ սրբոյն Մեսրոպայ, յիւրումն

մէջ եւ թէ այն, որ Մամուկիտիւս եւ Մովսէստ միեւնոյն քաղաքն է՝ Կիլիկիոյում, 437-դ. ծանօթութեան մէջ ասում է, որ Անի ամրոցն այժմս կոչւում է Ալաշաքիտ (?) և այլ պատկոխ բաներ։

Եւ այց սցուածինայիւ, Արթանապատիւ Հօր աշխատանքը օգտուէտ եւ գեղեցիկ գործ է, մանաւանդ օտարազգի լեզուներ չգիտցողների, այն է՝ մեծամասնութեան համար, եւ նոյն իսկ այդ լեզուներն գիտցողների համար էլ, եւ ընդունակ սրբագրութեւ։ Քննադատութեան իրաւացի ցուցումների համեմատ։

1) Սերէոսը իւր առաջին գլուխը սկսում է Պերոզով, իսկ իւր ժամանակագրական ցանկում Զինոնին դնում է ժամանակակից Պերոզի (եւ Վահան Մամիկոնեանի) (սկսում. Սեր. Սպր. 4879, եր. 24, 19)։

2) Խորենացու պատմութեան երրորդ (չորրորդ համարում) գլխից յետոյ Թովման իբրեւ աղբիւր յիշում է՝ «Համառօտութիւն Աբրահամի խոստովանողի» (եր. 80), և զիշէ (եր. 81) եւ չունի այլ եւս ոչինչ քաղած Խորենացուց։

3) Այս բանին վկայութիւն է Վորիւնի մէջ Յովսէփ անունը։

4) Աշխարհաբար Խորենացի. յաւաքաբան եր. ԽԱ.

ստուգարանեալ 1 պատմութեան զայսոսիկ մեզ հաւատարմացուցանէ, անշուշտ վերաբերում են այն կտորներին, Մաշտոցի և Սահակի մահուան վրայօք, որ Խորենացին երեւի փոխէ առեւ Վորիւնից, աւելացնելով ինչ որ կարող էր լսել նաև ժամանակակից ականատեսներից, ինքը Պարթևի և Մաշտոցի վախճանին բացակայ լինելով Հայաստանից:

Խորենացին ապրելով մինչև 493 թուականը, անկասկած կարող էր գրել և կրօնական պատերազմների պատմութիւնը, իրօք հասցնելով իւր գրուածքը մինչև Ջենոն կայսր inclusivement, բայց այդ բանը չարաւ նա, որովհետև գրում էր Սահակ Բագրատունու խնդրանք, իսկ Բագրատունիները, ինչպէս պարզ յայտնի է Եղիշէից, Վարդանանց կոխներում բռնել էին ուրացողներին, այն է՝ Վասակի կողմը, ուստի և Խորենացին ստիպուած էր բաւականալ մի ընդհանուր ողբով:

Այստեղ վերջացնում ենք մեր այս յօդուածը, կարծելով ապացուցած լինել, ա, Խորենացու չորրորդ գիրքը գոյութիւն չունէր, բ. ուստի և այդ չորրորդ գրքի մասին ոչինչ չգիտէր և Թովմա Արծրունին, գ. 2-րդ գրքի գրքի գոյութիւնը սկիզբն է առել գիմը դա կարգացուելուց, գրչագրի վրիպակից կամ սխալ վերծանութիւնից, գ. Արծրունու բոլոր յիշածները գտնուում են Խորենացու մէջ, բացի Ջենոն կայսրից և հարիւր քսան թուից, և այդ երկուսն էլ չպէտք է լինէին ըստ ինքեան, քանի որ Խորենացին չէր կարող գրել իւր մահուան թուականը կամ իւր տարիքի չափը մեռնելու օրին, իսկ մինչև Ջենոն պէտք է հասկանալ ոչ միասին կամ միանգամայն առած (inclusivement, включительно), այլ «միասին չհաշուած» — exclusivement.

Բանասէրները փոխանակ նախապէս Արծրունու բնագիրը հետազօտելու, ընտրել են աւելի գիւրին ճանապարհը, անձնատուր լինելով զանազան ձրի տեսութեանց (speculation) և ենթադրութեանց, ուստի և չեն հասել բաւարար եզրակացութեան:

Այսպիսով հերքւում է վերջնականապէս և հայ հոգեւորականութեան վրայ ծանրացող այն ահագին ամբաստանութիւնը, որ իբրև թէ սրանք այրած լինէին այդ ենթադրեալ չորրորդ գիրքը:

Յաւելուած. 2-րդորդ գրքի մասին յայտնուած բազմաթիւ կարծիքներ:

1) «Ստուգարանեալ, պատմութիւն է կոչւում Վորիւնի գրած Մեսրոպի վարքը, որի մէջ Վորիւնն ասում է. «Ոչ եթէ ի հին համբաւուց տեղեկայիալ եւ մատենագրիալ զայս կարգեցաք, այլ սրոց մեր ի սկականատե սեղեալ կերպարանացն՝ եւ աւընթերալայ հոգեւորական գործոց, եւ լսող շնորհապատում վարդապետութեանն, եւ նոցին աբանեալ ըստ աւետարանական հրամանացն» (Վորիւն, եր. 28):

րից և ենթագորութիւններից մի քանիսը, նոյն իսկ մեր այս՝ չորրորդ գրքի գոյութեան հերքումից յետոյ, կարծես թէ պահպանում են իրենց գորութիւնը, ուստի և այս յաւելուածում պարտաւորում ենք մի քանի խօսք ասել գրանց մասին։ Մի կողմ թողնելով այն բազմաթիւ հատուկտորները, որոնք Հ. Ալիշան իւր 1851 - ի յօդուածում համարում է ենթագործը Պ գրքի մասն, կանգ առնենք «ի Պարսից առասպելեաց» երկու գլուխ գրուածքի մի վկայութեան վրայ. — «Այլ ծանիր զատելութիւն մեր առ այսպիսի բան (առ առասպելս Պարսից), զի ոչ յառաջինսն մեր ասացեալ գիրս, և ոչ ի վերջին բանս արժանաւորեցաք շարել, այլ զատ և որիչ»։ Այս հատուածից Հ. Ալիշան հետեցնում է՝ թէ «առջին գրքեր» ասելով Խորենացին հասկանում է՝ իւր Պատմութեան առաջին, երկրորդ և երրորդ գիրքը, իսկ «վերջին բանով» — չորրորդ գիրքը, որի և մասն է համարում Հ. Ալիշանն այդ «ի Պարսից առասպելեաց» երկու գլուխը, նախ՝ հէնց այդ երկու գլխի համար է, որ Խորենացին ասում է թէ արժան չհամարեց դնել ոչ առաջին գրքերում և ոչ ի վերջին բանս, ուրեմն և եթէ ընդունենք անգամ, որ «վերջին բանքով» ակնարկուած է չորրորդ գիրքը, այսուամենայնիւ՝ այդ գրքի մասը չէին կարող լինել, նոյն իսկ իւր՝ Խորենացու խօսքերով, Պարսից առասպելները։ Բայց տեսնենք «վերջին բանք» նշանակում են արդե՞ք չորրորդ գիրքը։ Պէտք է նախապէս խոստովանիլ, որ Խորենացու ամբողջ Պատմութեան մէջ այս միակ հատուածն է, որի մէջ թէև ազօտ, սակայն՝ միակ և բաւականաչափ որոշ վկայութիւնը կարելի է գտնել Պատմութեան գրքերի թուի մասին։ «Վերջին բանք» անորոշ ասացուածով անկասկած կարելի է հասկանալ և երրորդ գիրք, և չորրորդ գիրք, և հինգերորդ, և վեցերորդ։ Ոչ մի փաստ չկայ «վերջին բանքով» անպատճառ չորրորդ գիրք հասկանալուն։ Ընդհակառակն՝ մենք ունինք փաստ, որ ստիպում է մեզ «վերջին բանքով» անպատճառ հասկանալ երրորդ գիրք։ Այդ փաստը նոյն իսկ երրորդ գրքի անունն է «Աւարտաբանութիւն»։ Աւարտաբանութիւն նոյնանիշ է վերջաբանութիւն կամ վերջին բանք բառերի հետ։ Ուրեմն և եթէ Խորենացին «վերջին բանք» ասելով հասկանում էր իւր Պատմութեան գրքերից որևէ մէկը, այդ անշուշտ Աւարտաբանութեան, այն է՝ երրորդ գիրքն էր 1)։ Իսկ եթէ

1) Բոլոր թարգմանիչները միատեսակ սխալ են թարգմանում այս նշանաւոր հատուածը, անշուշտ բացի Հ. Ալիշանից։ «Երաւունսն մեր ասացեալ գիրս» թարգմանում են եղապիսի, առանց ուշք դարձնելու «Երաւունսն» բառի յոգնակի ձեւին, իսկ «վերջին բանքը» թարգմանում են՝ վերջին գլուխներում, կամ՝ վերջին տողերում, բաւականանալք դնելով միայն Հ. Խորենի թարգմանութիւնը, «բայց

վե՛րջի՛ն բա՛նք ը երրորդ գիրքն է՛, ուրեմն առաջին ժրքերը կլինին՝ առաջին և երկրորդ գրքերը, այն է՝ Ծննդաբանութիւնը ու Միջակ Պատմութիւնը:

Մնում է մեզ խօսել Հ. Ալիշանի գտած վերին աստիճանի հետաքրքրական հատուածի վրայ, որը բաղմահմուտ և պատկառելի ծերունին, դեռ սրանից քառասուն տարի առաջ, համարում էր չորրորդ գրքի մասն, ինչպէս այդ համարում է և մինչև ցայսօր: Ահա այդ հատուածը ամբողջովին.

Յապհոյ Դանիէլ Տրդատի Եւթոմի Հայրի Քաջի և Աւագին:

«Իսկ թագաւորն Տրդատ յետ հաւատոցն ի Քրիստոս՝ ամենայն առաքիւնութեամբ փայլեալ մինչև ցվախճան արի ՝ ծերութեան, այլ խստասրտութիւն ազգիս մերոյ կամ ամբարտաւանութիւնն որ ի սկզբանէ պատահեցին՝ ամենայն գլորմանց սոցա պատճառք. քանզի չարք ոմանք հրամանաւ Շապհոյ խորհեցան սպանանել զՏրդատ, և միւսանգամ անդրէն զկռապաշտութիւնն հաստատել յաշխարհիս Հայոց. յորում խորհրդի լեալ էր և սենեկապետն Տրդատայ ըստ օրինակի Յուդայի մատնչի, Բայց ոչ դիտէր թագաւորն թէ քանի՞ք կամ ո՞րք իցեն. վասն որոյ կոչեալ զսենեկապանն զայն, հարցանէր եթէ իցէ՞ ինչ ի դրանս արդարև այսպիսի խորհուրդ: Նա իբրև լուաւ զահի հարեալ սրտաբեկ լինէր, և ուրացաւ թէ ոչ երբէք լուեալ է իմ այսպիսի բանս. վասն որոյ ելեալ առ ընկերս երկիւղազին, ի բաց կորուսանէին զխորհուրդն անօրէնութեան որպէս զարհուրեալք: Բայց ինքն թագաւորն ոչ առնելով դուլ՝ հեռանայր յարևմուտս կոյս մինչև ի գաւառն Եկեղեց, տեղի տուեալ լըոյն այնորիկ: Եւ քանզի բազումք էին ի խորհրդին, ոմանք զկնի նորա գնացին, մանաւանդ ազատքն Սիւնեաց կողմանցն, որք առաւել հրամանակատարք Շապհոյ լինէին վասն աշխարհին իւրեանց խաղաղական մնալոյ: Որք և ի յորս երէոց երբեմն ընդ թագաւորին լինելով յորոց և խոցեալ լինի թագաւորն, որպէս թէ յանգէտս ուստեք դիպեալ պատահեաց նետն, և եկեալ յարքունիսն՝ դնի ի մահիճս սակաւ ինչ վիրաւորեալ: Յորոց մտեալ սենեկապանն այն պատել զվէրս նորա, և տեսեալ զի ոչ մեռանել նմա ի վիրէն՝ արբուցանէ դեղ մահու և վախճանէ, որ յետոյ յայտնի իսկ ե-

դու ճանաչիր մեր տտելութիւնը գէտի տյսպիսի տուականը (?!) որ մենք արժան համարեցինք գրել (այսինքն՝ շորեւ, դնել) ոչ աւագ ջիւն գրքի մէջ եւ ոչ վերջին գլուխներում, սլլ զատ եւ առաւ ձին»:

1) Թերեւս՝ բարի:

ղև ի նորին խորհրդակցացն: Եւ բարձեալ տարան զնա ի Թորդան արծաթապատ դիակիր դագաղօք, յորում լծեալ ջորիք ոսկեսանձք, և գունակ գունակ հանդերձիւք զդագաղան զարդարելով. և վաշտք զօրացն աստի և անտի վառեալք զինուք և նշանակօք. իսկ առաջի դագաղացն ձայն աստուածօրհնութեան և բուրմունք խնկոց. իսկ աստի և անտի բարեկամք և սիրելիք, ընտանիք և բազումք յորդոցն նորա հետեակ անկեալ, և զկնի դագաղացն փողք և տաւիղք ողբոց, և կուսանք ողբասաց. թող զայլ ամենայն ռամիկսն որ երթային զհետ անթիւ բազմութեամբ, և այսպէս հասեալք ի տեղին, արարեալ տապան թագաւորական ի քարանց կճեաց, և ի վերայ ապակի արկեալ, յորում եղեալ զգանձն պատուական, զանուշահոտ զպատարագն, զմեծ վաստակաւորն. և տարեալ թաղեցին զնա ի տեղուջ սրուսանաց մեծին Գրիգորի, զոր պարսպեալ անուանեաց իւր պարտէզ: Եւ կանոնեցին զօր կատարման նորա տօնել ամ յամէ, զոր յանձն արարեալ եպիսկոպոսին գեղջն՝ գնացին: Տրդատ թագաւորեալ ամս 57, և ապա կատարեալ ի Հայր և յորդի և ի Հոգին սուրբ:

Ոչ մի տարակոյս չկայ, որ մեզանից հազար տարի առաջ այս հատուածը արդէն մոտք էր գտած Խորենացու մի քանի օրինակների մէջ՝ մասնաւորապէս Թովմա Արծրունու ձեռքումն եղած օրինակում, բայց ոչ իբրեւ չորրորդ գիրք, կամ չորրորդի մասն, ինչպէս կարծեց Հ. Ալիշան և նրան հետեւելով շատերը, այլ իբրեւ յաւելուած երկրորդ գրքի վերջում: Ահա Արծրունու վկայութիւնը. «բայց մեք զյոյժ հռչակեալսն միայն նշանակեցաք. սրբոյ թագաւորին և քաջ նահատակին Տրդատայ զբարիոք պատերազմ պատերազմեալ ընդդէմ անմարմին և մարմնաւոր պատերազմողաց, փոխի յերկրաւոր աշխատութեանցս ի հանգիստ, մեծաւ պատուով թագաւորական շքեղ և երեւելի դիւղարդութեամբ, որպէս ընթեռնուք ի բանիբուն գրակարգութեանն Մովսէսի տիեզերահռչակեալ վարդապետի և քերթողի և մերոյ լուսաւորութեանցս հաստատագոյն յօրինողի, որպէս պատմէ ի գլուխ երկրորդի պատմագրութեանն» (առաջին հրատարակ. Կ. Պոլիս, 1852, եր. 62—63, երկրորդ հրատ. Ս. Պետերբուրգ, 1887, եր. 58), Մեր այժմեան Խորենացիների մէջ ոչինչ չկայ Տրդատի մեծաւ պատուով թագաւորական շքեղ և երեւելի դիւղարդութեան մասին: Ակներեւ է, որ այս խօսքերը ակնարկում են Հ. Ալիշանի գտած հատուածին: Այս հատուածը Թովմայի Խորենացու օրինակի մէջ դրուած էր երկրորդ գրքի վերջում: «Ի գլուխ» բառը մենք վերջ ենք թարգմանում, խոստովանելով հանդերձ որ գլխի սովորական նշանակութիւնը էսկիզըն, բայց կայ այդ բառը և երկրորդ նշանակութեամբ դործածուած, իբրեւ վերջ, կա-

տարած, գլխաւորումն 1. Այս յայտնի է նաև՝ գլխաւորել, գլխել, ի գլուխ հանել բայերից, որ նշանակում են՝ վերջաւորել, վերջացնել, վերջանալ, (տես և Հայկազ. բառգիրք. գլուխ — ծագ. յետին, կատարած, գլխաւորումն), եթէ չորրորդ գիրքը գոյութիւն ունէր, այն ժամանակ այդ գիրքը պէտք է լինէր անշուշտ Թովմա Արծրունու Խորենացու օրինակում, և եթէ այս՝ Տրդատայ մահուան վերաբերեալ հատուածը չորրորդի մասն էր, պէտք է ղետեղուած լինէր այդ՝ չորրորդ գրքում, և ոչ թէ երկրորդ գրքի վերջում, ինչպէս վկայում է ինքը Թովման։ Այստեղից էլ է երևում պարզապէս որ ոչ չորրորդ գիրք կար և ոչ էլ այս հատուածը չորրորդի մասն էր 2) :

Մեր կարծիքով «Յ ա ղ ա գ ս մ ա հ ու ա ն Տ Ր Գ ա տ ա յ թ ա գ ա ռ ո ռ ի , Հ զ օ ռ ի , Ք ա ջ ի և Ա ռ ք ի ն ո յ» յօդուածը վկայաբանական մի գրուածք է, մասամբ հետևութեամբ Խորենացու և մասամբ մի ուրիշ աւանդութեան վրայ հիմնուած։ Շարագրուած է Տրդատի սրբոց կարգը դասուելու առթիւ՝ «Եւ կանոնեցին զօր կատարման նորա տոնել ամ յամէ»։ Խորենացին էլ թէև Տրդատին սուրբ է անուանում, բայց նրան սրբոց կարգը դասելու մասին ոչինչ չէ ասում։ Տրդատի սպանման մանրամասնութիւնները՝ թէ նա առաջ նետով վիրաւորուեց, նման Գնէլի, «որպէս թէ յանդէտս ուստեք դիպեալ պատահեաց նետն» անծանօթ են Խորենացուն, նոյնպէս Տրդատի սպանութեան մէջ Շապուհի մատ ունենալը։ Մանաւանդ պատճառաբանութիւնը, թէ կամենում էին նորից կռապաշտութիւնը հաստատել Հայաստանում, անտեղի է, նախարարները ըստ Խորենացու պահանջում էին միայն որ Տրդատը կրօնական գործերում բռնութիւն գործ չդնէ։ Իսկ յայտնի է որ Տրդատը Արգարի նման չէր բաւականանում միմիայն «հաւանեցուցանողականաւ բանիւ», այլ գործում էր նաև «բռնաւորականաւ բանիւ . . . քանզի ըստ հաւատոյն ոչ ինչ կասեցուցանէր զգործն» (Բ. 92)։ Թաղման հանդիսի նկարագրութիւնը մասամբ Ագաթանգեղոսի բառերով է կաղմած՝ «ոսկի և արծաթ, ձիս և ջորիս և հանգերձս, գունակ գունակ զարդս» (Ագաթ. ՃԺԳ), բայց գլխաւորապէս, և այս աչքի զարնելու չափ, նմանութիւն է Արտա-

1) Արծրունու միակ թարգմանիչը՝ Բրոսսէն «ի գլուխ երկրորդի պատմագրութեան, ասացուածը թարգմանում է. «en tete du second livre de son Histoire», յետոյ ծանօթութեան մէջ en tete—ի փոխանակ դնում է «dans le cours», երկու թարգմանութիւնն էլ, ըստ մեր կարծեաց, անյաջող են։

2) Հ. Աւիշանի յօդուածում փոխանակ «ի գլուխ»—ի՝ կայ «ի գլուխ», ընթերցուածը, բայց որին չեն երաշխաւորում ոչ Արծրունու երկու հրատարակութիւնները, եւ ոչ Պատկանեանի բաղադատած ձեռագրիչը։

չիսի թաղմանը, ըստ Խորենացու, Անշուշտ ինքը Խորենացին չէր նկարագրիլ երկու թագաւորի թաղումը նոյն տեսակ և գրեթէ նոյն բառերով: Տրդատի թաղման անյայտ հեղինակը աշխատել է դուրս թողնել Արտաշիսի թաղման նկարագրից հեթանոսական սովորութիւնները և երևում է, որ նա չէ գրել խարդախ մտքով, որ ներմուծէր իւր գրուածքը Խորենացու մէջ, ապա թէ ոչ չէր կրկնի Խորենացու խօսքերը, առնելով Բ գրքի վերջին գլխից և ոչ էլ նոյն տեղից առած Տրդատի քանի տարի թագաւորելը, այլ կաշխատէր յարմարացնել իւր գրուածքը իրրւ յաւելում: Պարզ է որ յետոյ է ներմուծուել այս գրուածքը Խորենացու մի քանի օրինակների մէջ, ըստ յարմարութեան տեղւոյն, Բ գրքի վերջում: Եթէ այս հատուածը հարազատ լինէր, անկարելի էր մեղ բացատրել թէ ի՞նչ պատճառով նա կարող էր դուրս ձգուել մեղ յայտնի՝ պատմութեան բոլոր ձեռագրերից, Համեմատութեան համար ահա՛ Արտաշիսի թաղման հանդիսի նկարագրից մի հատուած:

«Հասանէ վախճան Արտաշիսի: Եւ գրէ, եթէ որչափ ամբոխութիւնք մեռան ի մահուանն Արտաշիսի, սիրելի կանայք և հարճք և մտերիմ ծառայք, և որպիսի՜ շուք բազմադիմիս արարին առ ի պատիւ դիոյն, քաղաքական կարգօք և ոչ որպէս զբարբարոսս: Դագաղքն էին ոսկեղէնք, գահոյքն և անկողինքն բեհեզեայ, և պատմութեանն որ զմարմնովն՝ ոսկեթել, թագ կապեալ ի գլուխն, և զէնն ոսկով առաջի եղեալ, և զգահոյիքն շուրջ՝ որդիքն և բազմութիւն ազգականացն, և առ այսոքիւք պաշտօնէիցն զինուորութիւնք, և նահապետքն և նախարարութեանցն՝ զունդք և միանգամայն զօրականացն վաշտք, ամենեքին կազմեալ զինու հանդերձ, իրր թէ ի պատերազմ՝ ճակատիցին, և առաջի պղնձիս հարկանելով փողս, և զինիսն ձայնարկու կուսանք սեազգեստք և աշխարող կանայք, և զհետ՝ բազմութիւն ռամկին, Եւ այսպէս տարեալ թաղեցին: Եւ շուրջ զգերեզմանան լինէին կամաւոր մահունք» (Բ. 60): Ինչպէս վերն ասացինք, նկարագրի հեթանոսական մասերը դուրս են թողուած կամ փոխած են քրիստոնէականի:

Ուրեմն մեր կարծիքով, Հ. Ալիշանի գտած հատուածը, ոչ միայն չորրորդ ենթադրական գրքից չէ, այլ չէ նոյն իսկ Խորենացու գրուածը: Դա է լոկ մի վայելուչ և գեղեցիկ վկայաբանութիւն, հանուած ճառընտրից և երբեմն, մեզնից հազար տարի առաջ, ներմուծուած Խորենացու մի քանի օրինակներում: Մի կրօնական ներմուծութիւն եղել է Խորենացու և երրորդ գրքի վերջում ¹⁾, ուրեմն և անօրինակ բան չեն այդպիսի ներմուծութիւնները:

1) Տես «Համդէս ամսօրեայ», 1890, մայիս, եր. 114—115 եւ «Փարոս», 1874, օգոստ. Գ. էջ 2.

Եթէ մի բան, մի հարազատ հատուած, պակաս կայ մեր այժմեան Խորենացու մէջ, այդ միմիայն «Բան» կամ «Տաղ չափաւ յինքն և ի Սահակ Բագրատունին» է, որ պէտք է լինէր երրորդ գրքի վերջում, որովհետեւ այս վերնագիրը գտնուում է ընտիր ձեռագրերում, երրորդ գրքի վերջին գլխի վերտառութեան մէջ, Այս տաղն էլ Հ. Ալիշանը համարում է չորրորդ գրքի մասն, Խորենացու մէջ միակ պակասը, մեր կարծիքով, այս տաղն է, որի մասին մեր արած հետազոտութիւնները հասցրել են մեզ մի որոշ հետեւանքի, բայց որի մասին կ'սօսինք ուրիշ անգամ, առանձին յօդուածով:

ՄԻԱԲԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ.

ԽԹ.

(Շարահալ-ի-ն).

Փաշալու- գիւղ և շարա Շահապէղձներ: Մարալու- գիւղ. Մի-
նարի արշաւը. Վիսափոր եկեղեցի. հացիւրոյն և երգիչներ: Խաչարարո-
րեօճա-ր գիւղ. շարա Տաթո-ւն և եկեղեցին. Գեաթո-ր գիւղ: Չա-լը
և շարա եկեղեցին: Մարալի-ղ և շարա հա-րի-ններ: Պաճըլիւր:
Չրալը-: Թարի և Թերի գիւղեր: Քեօշապ: Լէյլիկաւան: Գե-թը-
խանայ: Ճահապարհարար-ի-ն և վերջահիւր:

Փաշալու՝ հայաբնակ գիւղ է, ունի 53 տուն, 277 արական և 235 իգական՝ ընդամենը 512 բնակիչ՝ Պարսկաստանի գաղթականներից: Պարապում են հողագործութեամբ, անասնապահութեամբ, մեղուապահութեամբ և մասամբ խաչագործութեամբ: Մարտիրոս գիւղի շրջակայքից ժողովուող ջուրը, իբրև մի առուակ, հոսելով Փաշալուի մօտիկ՝ միջոց է տալի գիւղացոց մրգաբեր այգիներ տնկել:

Հին գիւղ է՝ արդեօք Փաշալուն, այդ չգիտեմ, բայց ենթադրում եմ թէ դուցէ սա լինի Որբելեանի ցուցակի մէջ յիշած Փշօնք գիւղը: